

Գ Ա Ն Կ Ի Մ Ը

Դուռն ալ երբեմն իմաստութեան մը տանաբ
Եւ հէգ սրտի երջանկութեան տաղաւար,
Կը լեցուէիր արձագանգով հրնուանփի
Երբ գարուն էր, հորիզոններ ծիրանի:

Միայն անցեալն ունիս հիմա իբրեւ կեանք,
Եւ որոնում, ոչ սիրելու անբջանք.
Կը փայտ հին հետքերուդ հետ խարխալումն,
Խառնուելով փոշիներուն, փաթերուն:

Ու կը կռփեն քեզ անցորդներ անտարբեր,
Կապիւններէդ կը սուլէ հովն ողբասէր,
Թերեւս ինձ հայր, ազգական ես սիրելի,

Որոնց համար այնքան արցունք քափեցի:
Թոյլ տուր խրոսով նակատս դրնեմ քու նակտին
Ո՛վ լիւաճ գանկ, ո՛վ դու վախճան բոլորին:

~ ~ ~

Պ Ա Տ Ե Ս Ռ Ո Ւ Կ Ը

Տենչերն ինչպէս կը պահէ սիրտն ամօթխած,
Աչքերուն դէմ ֆող ձգելով իր շքնորին,
Պատկառուկն ալ հրպուսներէ մեղաւոր
Ըստուերներու մէջ կ'ամփոփուի երկիւղած:

Իր սիրտը լոկ մաքուր լոյսին կը դառնայ,
Արտոյտի պէս դողդըղալով յուզումէն,
Ու կը հոսի նեկտարն իր սուրբ շրթներէն
Այնքան բուրեան՝ կարծես գարնան սէրն ըլլայ:

Ծաղիկներն ալ ունին իրենց նագանքներ
Որոնց հեշտանքը փերթողներ լոկ կը զգան,
Մեր սրտերն են իրենց համար խնկաման,

Ուր կը դրնէ ամէն մէկն իր կեանքն ու սէր,
Մինչեւ վիշտերն ուրախութեան փոխարկուին,
Եւ իրենց հետ սուրբ տենչանքները ծաղկին:

Ա Ր Ա Հ Ե Տ Ը

Կը բարձրանայ լեռան կողէն ոլորուն,
Ճգնաւորի աղօթքն ինչպէս երկնաչու.
Ո՞ւր կը տանի այս առաջնորդն անխօսուն,
Եւ ես կ'երթամ առանց տրտունջ հանելու:

Ճամբայ մ'ունի հետեւելու ամէն մարդ,
Եւ երանի՛ անոր որ ետ չի նայիր.
Յանալս փուշեր, եւ փիչ անգամ փափուկ վարդ,
Թէեւ ցանէ մեր ռոտերուն տակ երկիր:

Ու ես կ'երթամ զարնուելով փարէ փար,
Թերեւս տանի զիս անդունդներ խաւարին,
Աստուած գիտէ ամէն մարդու նամապարհ,

Ինչպէս հետքերն արեւամերձ արծիւին:
Ու ես կ'երթամ լոկ մըտերիմ՝ սրտիս հետ
Մինչեւ հասնի դամբանիս քով արահետն:

~ ~ ~

Ա Ն Ծ Ա Ն Օ Փ Ի Ն

Մենք օր մ'անշուշտ պիտ' հանդիպինք իրարու
Ճամբու մը մէջ որ հեռուները կ'երթայ,
Անոյշ արեւ մը պահած եմ քեզ տալու
Գարուններէս եւ սէրերէս հրնօրեայ:

Դուռն պիտ' ըլլաս պըսակն իմ նոր օրերուս
Եւ ես քեզի սափոր մը լի տենչերով:
Աչքերդ վառ մէջն իմ ծարաւ աչքերուս
Դիտենք զիրար ինչպէս երկինք, ինչպէս ծով:

Աղփատի պէս նամբաներու եզերքին
Քեզ կը սպասեմ, ո՛վ անծանօթ սիրելի,
Որ մեր ձեռքերն իրարու մէջ սեղմուին

Երկինքն ինչպէս կ'երկարէ ձեռքն աշխարհի:
Քեզ կը սպասեմ արեւուն հետ այսօրուան
Դուռն սրտիս հիւր, դուռն ինձ եղբայր սիրական:

Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ